Մարկոս եպիսկոպոսի, մեկնեալ անտի եհաս յԱտանա քաղաք Կիլիկիոյ ունելով ընդ իւր զպատճէն հրովարտակին զաֆարու, և ձեռնտուութեամբ Իշխանաց քաղաքին և գրով Քաղաքապետին տայ արձանագրել զայն 'ի պատշաճաւոր տեղիս ծախիւք ժողովրդոց։ Եւ անտի յղեաց զրեռինս իւր 'ի Յոպպէ, գրեալ առ Խորհրդականս գնալ 'ի Դամասկոս եւ անտի դառնալ յԵրուսաղէմ, զի ունէր խորհուրդ ինչ յայտնել նոցա, և անտի դիմեալ 'ի Բերիա, աշխատ եղեւ վասն բարձման Զաֆարի ուխտաւորաց 'ի կողմանցն և էառ Իլամն 7. եւ ապա ժողովեալ զազգայինս տեղւոյն բանս արկ յականջս նոցա, որպէս թէ տնօրէնութեամբ ազգապետաց թագաւորեալ քաղաքին 'ի վաճառ հանել զամենայն կալուածս Աթոռոյն որ անդ, զորմէ միաբանք Աթոռոյն եւ Պօղոս եպիսկոպոս չունէին տեղեկութիւն, այլ միայն Զաքարիա վարդապետ և Գլխաւորք ազգին, զոր և լուեալ յետոյ Պօղոսի և Խորհրդականաց հաճեցան. սակայն տեսեալ զթշուառ վիճակս քաղաքացեաց յերեսաց ծանր հարկապահանջութեանց, յորմէ մեկնէին բազումք, եթող զայն խորհուրդ և գնաց 'ի Դամասկոս և անտի յԵրուսաղէմ։ Լուեալ զայս Կիրակոսի եւ Զաքարիա զայրանային յոյժ, զի մին գրէր 'ի գալստեան Եղիայի՝ պարտ է Պօղոսի ելանել արտաքս, գոլով անտեղեակ բարուց և բնաւորութեանց նորին, և միւսն գրէր առ Պօղոս, «Արտասուօք աղերսեմք չելանել Աթոռոյն, այլ եթէ տկարութիւնն ստիպէ՝ զԿիրակոս եպիսկոպոսն բեր և նմա յանձնեա զկառավարութիւնն, զի օգնական լիցի. զնոյն գրեաց և առ Կիրակոս եպիսկոպոս երթալ յԱթոռն, իսկ եթէ սխալիս ասէ՝ վերստին բերել զնեղիա յԱթոռն, պատճառ լինիս կործանման նորին, իսկ եթէ վասն առնելեաց իւրոց խնդրէ գալ յԱթոռն, նախ առաքեսցէ զմուրհակսն 'ի նշան հաւատարմութեան իւրոյ, եւ ինքն մնասցէ ժամանակս ինչ 'ի Սիս, որպէս խնդրէր երբեմն. ծերունի Մարկոս եպիսկոպոսն տակաւին հակառակութեան ոգւով նստեալ 'ի վանս Իւսկիւտարու պաշտպանել կամի զիւրսն»։ Իսկ Կիրակոս եպիսկոպոս դժկամակ լինէր գնալ յԱթոռն, պատճառելով զտհաճութիւն ժողովրդոց տեղւոյն, որպէս տեսեալ էր Պօղոս եպիսկոպոս յառաջագոյն, և եթէ մեկնէր անտի ընդդէմ կամաց նոցին,